# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<23>> <<փետրվարի>> 2026թ. NՄՈ/ 106 -Ա

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N ՄՈ/100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման N 9.1 հավելվածը, նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին փարակարգի հավելավճարները վճարելու նպատակով՝*

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի փետրվարի 19-ի «Գումար հատկացնելու մասին» N ՄՈ/100-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝*

1) *որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.*

*«1. 1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Նախադպրոցական ծրագիր» ծրագրի «Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժների շնորհման գործընթացի միջոցով»*

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

միջոցառման շրջանակներում փնփեսագիտական դասակարգման «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով նախատեսված 1 918 800 (մեկ միլիոն ինը հարյուր տասնութ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 1 497 600 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի և Մեծամորի համայնքապետարաններին՝ համաձայն հավելվածի :».

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2026 թվականի փետրվարի 23-ի*
*ՆՄՈ/ 106 -Ա*
*որոշման*

*<<Հավելված*

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*

*2026 թվականի փետրվարի 19-ի*
*ՆՄՈ/100-Ա որոշման*

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ «ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ՀՈԴՎԱԾՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

/հազար դրամ/

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Ընդամենը գումար |
|---|---|---|
| 1 | Մեծամորի համայնքապետարան | 374.4 |
| 2 | Արմավիրի համայնքապետարան | 1123.2 |
| | **Ընդամենը** | 1497.6 |
| | | |

>>:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ